«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸԹԱՑ

Հետազոտության թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան ՝ Գծանկար

Հետազոտող ուսուցիչ՝ Գագիկ Աբրահամյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Մանուկ Աբեղյանի N3 ավագ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ 1.....5

1.1. Արժեքային հենք.....5

1.2. 21-րդ դարի աշակերտի արժեքային համակարգը.....7

Գլուխ 2.....9

2.1. Արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում.....9

2.2. Ուսուցչի դերը արժեքային համակարգի ձևավորումը.....10

2.3. Արժեքային համակարգի ձևավորումը Կերպարվեստի դասերին.....12

Եզրակացություն.....15

Օգտագործված գրականության ցանկ.....17

Ներածություն

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական, բովանդակային բազմաթիվ փոփոխություններն իրենց անմիջական գործունեությունն են ունենում անձի ձևավորման, արժեքային համակարգի փոփոխման, սոցիալականացման վրա: Սոցիալական ինստիտուտները երբեմն դժվարանում են իրականացնել իրենց գործառույթները, քանի որ տեղի է ունեցել բարոյամշակութային արժեքների վերաիմաստավորում: Անձի սոցիալականացման տարբեր փուլերի ընթացքում խոր հակասություններ են ստեղծվում համամարդկային և ազգային, հասարակական և անձնային արժեքների միջև: Տարիքային շրջաբաժանմանը զուգընթաց փոփոխվում են բարոյամշակութային արժեքները, որոնք ուղղակիորեն արտահայտվում են անձի աշխարհայացքում, դաստիարակվածության, կրթվածության, զարգացվածության մակարդակում, վարքագծում, հաղորդակցական մոդելներում: Համաշխարհայնացմամբ պայմանավորված հասարակական արժեքների ձևավորման հիմքում ընկած քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ գործոններ երբեմն խոչընդոտում են սովորողի՝ որպես անձի ներդաշնակ և լիարժեք ձևավորմանը: Սովորողների շրջանում բարոյամշակութային արժեքների ուսումնասիրությունը փաստում է, որ հիմնախնդրի քննարկումը կարևոր է, արդիական և հրատապ:

Մարդկային հասարակության ստեղծած հոգևոր և նյութական արժեքները բնութագրում են հասարակության զարգացման մակարդակը և փոխանցվում սերնդեսերունդ: Մարդկային բարձրագույն արժեքների ձևավորման ամենակարևոր դարբնոցը դպրոցն է: Ուսումնառության ողջ գործընթացում սովորողները ձեռք են բերում ոչ միայն բազմապիսի գիտելիքներ, կարողություններ, աշխարհաճանաչողություն, այլև անձնային բարձր որակներ:

Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխգործակցության արդյունք է, որի արդյունավետությունը պայմանավորված է և՛ արժեքների յուրացման նկատմամբ

սովորողների գործունեությամբ, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի փորձառությամբ:

Թեմայի արդիականությունը.

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է ապահովի հանրակրթությունը:

Հետազոտության նպատակները.

Հետազոտել արժեք հասկացությունը, արժեքների ձևավորման նախապայմանները:

Ուսումնասիրել արժեքային համակարգի ձևավորման գործընթացում ուսուցչի, սովորողի և առարկայի դասավանդման դերերը:

Հետազոտության խնդիրները.

Կատարել հիմնահարցի վերաբերյալ գրականության վերլուծություն,

Բացահայտել 21-րդ դարի աշակերտի արժեքային համակարգը,

Ուսումնասիրել աշակերտների արժեքների ձևավորման վրա ազդող գործոնները,

Ուսումնասիրել աշակերտների արժեքների ձևավորման խնդիրները,

Ուսումնասիրել առարկայի ճիշտ դասավանդման դերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում:

Աշխատանքի կառուցվածքը.

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից և ենթավերնագրերից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքում ներկայացվել է հիմնահարցի տեսական հիմքերը, հայտնի, սահմանումները, վերաբերմունքն ու դիրքորոշումները հիմնահարցի վերաբերյալ:

Գլուխ 1

1.1. Արժեքային հենք

Մեր ձգտումներն ու արարքները, վարքն ու հույզերը, դրսևորումներն ու մտահաղացումները կախված են մեր արժեքներից՝ թե ինչին ենք մենք դավանում և ինչով ենք առաջնորդվում:Հենց այս պատճառով էլ ցանկացած ոլորտի դիտարկում անհրաժեշտ է սկսել նախ և առաջ իր արժեքային հենքի և սեփական (անձի կամ հասարակության մակարդակում) արժեքային համակարգի համադրմամբ:

Մեր ձգտումներն ու արարքները, վարքն ու հույզերը, դրսևորումներն ու մտահաղացումները կախված են մեր արժեքներից՝ թե ինչին ենք մենք դավանում և ինչով ենք առաջնորդվում:

Բոլորս այս կամ այն ձևով ձգտում ենք երջանկության, որի անհրաժեշտ կարևորագույն գործոնն է սեփական արժեքային համակարգի, ինքնաարտահայտման և արտաքին աշխարհի համապատասխանությունը, կամ, արևելյան տերմիններով, համաչափությունը:

Հենց այս պատճառով էլ ցանկացած ոլորտի դիտարկում անհրաժեշտ է սկսել նախ և առաջ իր արժեքային հենքի և սեփական (անձի կամ հասարակության մակարդակում) արժեքային համակարգի համադրմամբ:

Ժամանակակից աշխարհի արագացված տեմպը հաճախակի տեղ չի թողնում ոչ միայն սեփական կյանքի ընթացքի ամփոփ վերլուծության, այլ երբեմն՝ նույնիսկ պարզ ինքնագնահատականի համար: Մեր խորին համոզմամբ, սակայն, այն միայն յուրաքանչյուրի սեփական սխալն է, այլ ոչ՝ բուն տեմպի: Երջանկության ձգտելու վերոհիշյալ հիշատակման համատեքստում ակնհայտ է, որ նման սխալները պակասեցնում են արդյունավետությունը՝ մի կողմից, և, մյուս կողմից, անհնար են դարձնում բավարարվածության զգացումը՝ ձախողելով երջանկության վերոհիշյալ

ձգտումը: Այդ իսկ պատճառով ցանկացած գործունեության համար, իսկ նոր սկսվող կամ նոր դաշտ բացող գործունեության հանդեպ՝ առավել ևս, պետք է հստակեցվեն անհատական հետևյալ հիմնական նախապայմանները.

I. **Մոտիվացիայի վերհանում**

Մոտիվացիան բխում է հենց սեփական արժեքային հենքից. ինչին ենք ձգտում, ինչն ենք համարում կարևոր, ինչի վրա ենք պատրաստվում ծախսել սեփական ռեսուրսները, ինչ ենք ուզում, և այլն: Հենց մոտիվացիայի հստակեցումն էլ պետք է լինի առաջին քայլը, դա էլ հանդիսանում է այն վեկտորը, որն ապահովելու է անհրաժեշտ ներքին ռեսուրսները:

II. **Կարիքի ձևակերպում**

Ինչի կարիքն ունենք (մենք ինքներս կամ արտաքին միջավայրը)՝ այս հարցը, չնայած իր պարզությանը, հաճախակի չի նույնականացվում՝ դիտարկվելով լոկ հասարակության մեջ ընդհանուր տիրող շաբլոններին համապատասխան:

III. **Նպատակադրում**

Նպատակադրումը բավականին ամփոփ նախապայման է՝ իր մեջ ներառող մի շարք հոգեբանական գործոններ: Մեզ, սակայն, այստեղ հետաքրքրում է նպատակը ճիշտ սահմանելու ունակությունը՝ հիմնվելով նախորդ երկու կետերի արդյունքների վրա, և հաջորդ երկու կետերը դիտարկելու պատրաստակամությունը՝ սահմանված նպատակին հասնելու ճանապարհին:

IV. **Սեփական ունակությունների և կարողությունների գնահատում**

Եթե նախորդ նախապայմանների իրագործման համար անհրաժեշտ է գիտակցվածություն ու սթափ վերլուծություն, ապա այս կետի համար հիմնարար որակը դառնում է անկեղծությունը՝ սթափ գնահատել սեփական ունակություններն ու կարողությունները նախորդ երկու կետերի համեմատության մեջ:

V. **Նպատակի իրականացման համար առկա հնարավորությունների դիտարկում**

Ամենալավ նպատակը կարող է անիրականանալի թվալ (կամ իրոք լինել), ուստի առկա

հնարավորությունների, ռեսուրսների, միջավայրի օբյեկտիվ դիտարկումը վերջին անհրաժեշտ նախապայմանն է գործունեությունն իրականացնելու համար:

Ինչպես արդեն նշել ենք, այս համակարգն աշխատում է ցանկացած ոլորտում, բայց առավելագույնս կարևորվում է նոր նախաձեռնությունների ժամանակ: Սոցիալական ձեռնարկատիրությունը, լինելով բավականին նոր ոլորտ մեր հասարակության համար, պահանջում է առավել շրջահայաց մոտեցում և անկեղծ նվիրվածություն, սակայն առաջին հերթին ինքնավերլուծություն՝ հենց նշված կետերով:

1.2. 21-րդ դարի աշակերտի արժեքային համակարգը

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում շատ անելիք-ներ ունի հայ դպրոցը, որի նպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ. սովորողների մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Այստեղ հիմնական խնդիրն է՝ պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազա-նության մեջ:

21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպ-ման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձր-արժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Ժամանակակից մանկավարժները դաստիարակության նպատակների մեջ դիտարկում են.

- դպրոցականի անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար պայմանների ստեղծում՝ նրա հնարավորինս լիարժեք ինքնաիրացման համար.

- մարդուն արժանի կյանքի կառուցման ընդունակություն, որը հիմնված է այնպիսի հանգուցային արժեքների վրա, ինչպիսիք են ճշմարտությունը, բարությունը և գեղեց-կությունը.
- 21-րդ դարի հայի՝ որպես մշակութային մարդու ինքնազարգացում: Բոլոր ժամանակ-ներում դաստիարակության տարբեր համակարգերում առաջնային է եղել բարոյական դաստիարակության նպատակը:

Այսօր դաստիարակչական աշխատանքի միջուկը համարվում է հոգևոր-բարոյական դաստիարակությունը: Հոգևոր-բարոյական զարգացումը սոցիալականացման գործընթացում անձի արժեքային-իմաստային ոլորտի հետևողականորեն ընթացող ընդլայնումն է և ամրակայումը, մարդու ընդունակության ձևավորումը՝ գնահատել և գիտակցորեն կանգնել ավանդական բարոյական նորմերի և բարոյական իդեալների հիմքի վրա ինքն իր, ուրիշ մարդկանց, հասարակության, պետության, հայրենիքի, ամբողջությամբ վերցրած՝ աշխարհի հանդեպ վերաբերմունքում և հարաբերություններում:

Հանրակրթության մեջ կրթական բոլոր մակարդակներում սովորողների հոգևոր-բարոյական դաստիարակության և սոցիալականացման նպատակն է բանիմաց, ստեղծագործ, բարձր բարոյական ՀՀ քաղաքացու ձևավորմանը և զարգացմանը նպաստելը: Նպատակից բխում են խնդիրները, որոնք թույլ են տալիս կառուցել դաստիարակության ռազմավարությունը և ապահովել նրա արդյունավետությունը: Սովորողների դաստիարակության և սոցիալականացման ընդհանուր խնդիրները դասակարգված են առանձին ուղղությունների, որոնցից յուրաքանչյուրը, սերտորեն կապված լինելով մյուսների հետ, բացահայտում է ՀՀ քաղաքացու հոգևոր-բարոյական զարգացման մի էական կողմ.

- քաղաքացիա-հայրենասիրական դաստիարակություն,
- հոգևոր և բարոյական դաստիարակություն,
- ստեղծագործականության և աշխատանքի հանդեպ դրական վերաբերմունքի դաստիարակություն,
- մտավոր դաստիարակություն,
- առողջարարական դաստիարակություն,

- սոցիո-մշակութային և միջմշակութային դաստիարակություն,
- մշակութա-ստեղծագործական և գեղագիտական դաստիարակություն,
- անվտանգության մշակույթի և իրավական դաստիարակություն,
- ընտանեկան արժեքների դաստիարակություն,
- հաղորդակցական մշակույթի ձևավորում,
- էկոլոգիական դաստիարակություն:

Արժեքային և աշխարհայացքային համակարգի ձևավորումը կրթության հիմնախնդիրներից է: Մեր նպատակն է ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի: Տեսականի և գործնականի համադրումը ժամանակակից հանրակրթության կարևորագույն սկզբունքներից է: Աշակերտների հետ աշխատանքում կիրառվում են բազմաթիվ հնարներ, ձևաչափեր ու միջոցներ՝ դաստիարակելու համար այնպիսի արժեքներ, ինչպիսին են փոխօգնությունը, դիմացինի կարծիքի հետ հաշվի նստելը, նոր ստեղծագործական մտքերի ու մոտեցումների առջև բաց լինելը, ուրիշի մտքերը և ստեղծագործական աշխատանքը գնահատելն ու չգողանալը, ճշտապահ և պատասխանատու թիմի անդամ լինելը, որոշումներ կայացնելիս բարեհոգության, հարուստ տեղեկությունների և ստեղծագործական մոտեցումների վրա հիմնվելը:

Գլուխ 2

2.1. Արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում

Արժեքային կրթությունը ի սկզբան կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները:

Այս հետազոտական աշխատանքի խնդիրն է ուսումնասիրել նաև արվեստի դասավանդման ընթացքում երեխաների մոտ ձևավորված արժեքների բացահայտմանը:
Գոյություն ունեն «նյութական արժեքներ», «հոգևոր արժեքներ» և «մնայուն արժեքներ»: 21-րդ դարում մարդկանց համար նյութական արժեքներ են օրինակ փողը, հեռախոսը, մեքենան, կեցավայրը, հարմարությունները, արվեստի բարձրարժեք ստեղծագործությունը և այլն:
Հոգևոր արժեքներ են սերը, հարգանքը, բարոյականությունը, կյանքը, շրջապատը, ընկերները, ազատությունը, ստեղծագործական միտքը ...:
Մնայուն արժեքներ են մարդու կողմից ստեղծած պատմամշակութային կոթողները, հուշարձանները, եկեղեցիները և այլք:
Մեր երկրում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:
Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

2.2. Ուսուցչի դերը արժեքային համակարգի ձևավորումը

Որպես ուսուցիչների համար գերակա խնդիր, համարվում է արժեքների յուրացման ազատ ստեղծագործական գործընթացը, որը «բնութագրվում է օբյեկտիվացման և ապ օբյեկտիվացման, ակտուալացման և սպառման միասնությամբ»:
Մանկավարժական, ինչպես ցանկացած այլ հոգևոր, արժեքները կյանքում ինքնաբերաբար չեն հաստատվում: Դրանք կախված են հասարակության սոցիալական, քաղաքական, տնտեսական հարաբերություններից, որոնք մեծապես ազդում են մանկավարժության և կրթական պրակտիկայի զարգացման վրա: Ավելին, այդ կախվածությունը մեխանիկական չէ, քանի որ հասարակության մակարդակի

ցանկալի և անհրաժեշտը հաճախ բախվում են բախումների, որոնք լուծում է որոշակի անհատ՝ ուսուցիչ, իր աշխարհայացքի, իդեալների շնորհիվ՝ ընտրելով մշակույթի վերարտադրության և զարգացման մեթոդները:

Մանկավարժական արժեքները, ինչպես մյուս արժեքները, շարահյուսական բնույթ ունեն, այսինքն. Ձևավորվում են պատմականորեն և գրանցվում մանկավարժական գիտության մեջ՝ որպես սոցիալական գիտակցության ձև՝ հատուկ պատկերների և գաղափարների տեսքով: Մանկավարժական արժեքների յուրացումը իրականացվում է մանկավարժական գործունեության գործընթացում, որի ընթացքում դրանք սուբյեկտիվացվում են: Դա մանկավարժական արժեքների սուբյեկտիվացման մակարդակն է, որը ծառայում է որպես ուսուցչի անձնական և մասնագիտական զարգացման ցուցիչ:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Դաստիարակության և ուսուցման հաջողությունը մեծապես կախված է ուսուցչի դասավանդման մեթոդների և տեխնիկայի կիրառումից, ուսուցանվող նյութի բովանդակությունը հետաքրքիր և մատչելի հաղորդելու ձևից է կախված, թե աշակերտը ինչ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք կբերի:

2.3. Արժեքային համակարգի ձևավորումը Կերպարվեստի դասերին

Արվեստը աշխարհաճանաչման միջոց է:

Այն կոչված է կրթելու և դաստիարակելու մարդուն:

Վ. Սոխոմլինսկի

Մարդը բնություն է:

Բնությունը՝ մարդ:

Մ. Սարյան

Արվեստի դասերը օգնում են աշակերտին զարգանալ համակողմանի՝ ոչ միայն հոգով այլ նաև մտքով: Արվեստի տարբեր ոլորտներին առնչվող ռարկաները նպաստում են, որ աշակերտի մոտ զարգանա գեղեցիկը տեսնելու, լսելու և ճանաչելու կարողությունը :Առանց գիտական լուրջ գիտելիքների անհնար է տիրապետել նկարչությանը:Կարևոր է, որ աշակերտը ոչ թե մեխանիկորեն տիրապետի նկարչական հմտություններին, այլև ուսումնասիրի տեսությունը: Իհարկե դպրոցում աշակերտը ծանոթանում է և գիտելիքների որոշակի բազա է ձեռք բերում, բայց անհրաժեշտ է, որ աշակերտը հետաքրքրություն ցուցաբերի և իր գիտելիքների պաշարը ավելացնելու և ամրապնդելու համար ուսումնասիրի գրքերը և լրացուցիչ այլ աղբյուրներ:

Աշակերտները արվեստ ստեղծելիս բացահայտում են նոր բաներ, այնուհետև, կարողանում են նոր գիտելիքները կիրառել առօրյա կյանքում: Աշակերտները սկսում են ամենինչին ստեղծագործ մոտեցում ցույց տալ, ինչն էլ կարող է արդյունավետ լինել այլ առարկաներ սովորելիս: Արվեստի նախագծերը երեխաներին սովորեցնում են արդյունավետ լուծումներ գտնելու և դրանցից սովորելու արժեքը: Գեղարվեստական կրթությունը էական է աճի և զարգացման համար, քանի որ երեխաները ոչ միայն

ստեղծագործական ունակություններ են արտահայտում, այլև կյանքի կարևոր դասեր են սովորում:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում աշակերտների մոտ արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ է կերպարվեստի առարկայի դերը: Կերպարվեստը գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար: Առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, վերլուծական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Կերպարվեստը կամուրջ է հանդիսանում տարբեր մշակույթների միավորման համար: Մշակույթն է մեզ սովորեցնում ինչպես շփվել ուրիշների հետ, ձևավորելով արժեքներ և էթիկայի կանոններ: Այս ամենից զատ հարկ է նշել, որ հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է աշակերտների մոտ ձևավորել հարգանք դեպի օտար մշակույթը և ավանդույթները, ձևավորել գիտելիքներ օտար ժողովրդի արվեստի և արհեստի ճյուղերից: Կերպարվեստ առարկայի դասաժամերին արժեքային համակարգը ձևավորվում է հիմնականում համեմատականներ անցկացնելով: Օտար մշակույթը, արվեստն ու արվեստագետներին ուսումնասիրելով ձևավորում են հարգանք օտար մշակույթի ինչպես նաև սեփական մշակույթի, արվեստի ու հայ նկարիչների նկատմամբ: Ձևավորվում են հոգևոր արժեքներ, գնահատանք վերարժևորում են սեփական ավանդույթները:

Կերպարվեստի դասընթացը սովորողին ուղեկցում է գեղեցիկի աշխարհ, հարստացնում է նրա ներաշխարը, նպաստում է գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Կերպարվեստի դասավանդումը դպրոցում զարգացնում է սովորողի գեղագիտական, բարոյական, մտածողական հմտությունները: Նկարչական, ստեղծագործական գործունեությունը նսպաստում է սովորողի մտածողության,

պատկերացման զարգացմանը: Պարզելու համար, թե որ արժեքներն են ձևավորվում աշակերտների մոտ ուսումնառության ընթացքում իրականացվեց հետազոտություն: Հետազոտության ընթացքում սովորողների միջավայրում իրականացվեց հարցում, որին մասնակցեցին միջին դասարանների մի խումբ սովորողները:

Հարցին, թե ո՞ր արժեքներն են ձևավորվում կերպարվեստի դասընթացի ընթացքում, սովորողները թվարկում էին հետևյալ արժեքները՝

- Ազատությունը (խոսքի, ընտրության և այլն):
- Ստեղծագործական ինքնադրսևորումները:
- Ինքակառավարումը աշխատանքի մեջ: Աշխատանքից հաճույք ստանալը :
- Ինքնակրթությունը:
- Ժամանցը՝ հաճույք, հոբբի, զվարճանք:
- Մտերիմները, ընկերները, շփումը:
- Հոգևոր արժեքները, հոգևոր աճը, կրոնը:
- Մարդու կողմից ստեղծած պատմամշակութային կոթողները, հուշարձանները, եկեղեցիները:
- Մշակույթը:
- Գեղեցկությունը
- Սոցիալական կարգավիճակը և դիրքը հասարակության մեջ:
- Նյութական բարեկեցությունը:
- Կայունությունը:

Այսպիով, կերպարվեստի դասընթացը աշակերտների մոտ արժեքային համակարգի ձևավորման գործում ծանրակշիռ դերակատարում ունի:

Եզրակացություն

Ժամանակը, որում մենք ապրում ենք, անշուշտ թելադրում է իր պահանջները՝ մասնավորապես կրթության մեջ առաջադրելով ազատ ստեղծագործող, բազմակողմանի զարգացած և կենսունակ անձի խնդիր: Այս խնդիրն իր ընդհանրության մեջ կարող է լուծվել, եթե աճող սերնդի ուսումնադաստիարակչական գործընթացում իր առանձնակի արտացոլումն ունենա գեղարվեստական մանկավարժությունն իր բոլոր դրսևորումներով: Ոչ միայն գեղարվեստական դաստիարակության, այլև մեր անցյալի պատմության ուսումնասիրման համար պետք է կարևորել կերպարվեստի դերն ու նշանակությունը: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացը իրականանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական, տեղեկատվական և այլն: Մեր՝ ուսուցիչներիս դերը շատ մեծ է աշակերտների մեջ ճիշտ արժեհամակարգ ձևավորելու գործում: Քանի որ երեխաները իրենց օրվա ավելի մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը: Արժեհամակարգ ձեւավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ աննկարագրելի բերկրանք է տեսնելը՝ իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված: Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետևյալ եզրահանգումներին՝

- Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:
- Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային

փոփոխությունները:

Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:

- Արվեստի, հատկապես կերպարվեստի ուսուցումը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո կարող ենք անել հետևյալ առաջարկությունները.

- Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար անհրաժեշտ են սերտ շփումները արվեստի հետ:
- Դասաժամերին հավելյալ քննարկումները, արվեստի պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու համար:
- Միջմշակութային հաղորդակցությունը, նոր մշակույթների հետ ծանոթությունը, նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողների մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1 Գեղագիտական դաստիարակություն «Լույս», 1975թ.:

2 Ա. Բալյան-Դպրոցականների գեղագիտական դաստիարակություն «Լույս», Երևան, 1979թ.:

3 https://elearning.kasa.am/mod/book/view.php?id=1230&chapterid=172:

4 https://elearning.kasa.am/mod/book/view.php?id=1230&chapterid=170&lang=en:

5 https://hy.scienceforming.com/10585127-what-are-human-values:

6 Каган М. С., Морфология искусства.: Историко- творческое исследования внутреннего строения мира искусств. Чакть 1.2,3, П.: Искуство, 1972. - 440 с.

7 Մինդտոլներ (S.F.) Որո՞նք են ձեր արժեքները: Վերականգնված է՝ mindtools.com կայքից:

8 Singer, P. (2015): Էթիկա Վերականգնված է ՝ britannica.com կայքից:

9 Իսաև I.F. «Ուսուցիչների մասնագիտական մանկավարժական մշակույթի ձևավորման տեսություն և պրակտիկա ավագ դպրոց», 1993 թ. - 219 էջ:

10 https://oimurschool.ru/hy/samorazvitie/13-interesy-cennosti-idealy-pedagoga-otrazhayut-cennostnye-harakteristiki/: